Հայտարարվում է մրցույթ՝
ՀՀ Տավուշի մարզի «Բերքաբերի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հայոց լեզու և գրականություն (15 դասաժամ), մաթեմատիկա (11 դասաժամ), ռուսաց լեզու (21 դասաժամ), կերպարվեստ (6 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:
Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարի:
Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցնանցկացնում առանձին:Մրցույթին մասնակցելու համար անձը հանձնաժողովին է ներկայացնում՝
1. դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
2. բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
3. անձը հաստատող փաստաթուղթ,
5. <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխանաշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից
6. աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
7. ինքնակենսագրություն (Ձև 5),
8.այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հաստատողփաստաթուղթ,
9. ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
10.հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
11.որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք: **Փաստաթղթերն ընդունվում են սույն թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 14-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:**

Մրցույթը տեղի կունենա 18.10. 2024թ, ժամը՝ 14:00 -ին, ՀՀ Տավուշի մարզի Բերքաբերի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ Տավուշի մարզ, գ.Բերքաբեր, 3-րդ փող, շենք 1:
Տեղեկությունների համար զանգահարել՝ (077)-90-39-09 հեռախոսահամարով: